

## «ԾՈՒԾԻ» ՏԵՂԱՆՈՒԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Արտակ Վարդանեան

Հայկական տեղանունների թուրքականացման ամենատարածուած ձեւերից մեկը, թերեւս, տեղանունների այնպիսի միտումնաւոր խեղաթիւրումն է, որը, անկախ նրա արտայայտած իմաստից, ինչ որ նշանակութիւն է ունենում թուրքերէնում կամ ադրբեջաներէնում, ուստի, խեղաթիւրողների կարծիքով, «ապահովում է» տուեալ տեղանունն «թուրքական ծագում» ունենալու տպաւորութիւնը:

Մեր պատմական տեղանունները օտարելու եւ իւրացնելու շատ ակնյայտ ձգտում եւ փորձ ունեն թէ՛ թուրքերը, թէ՛ ոչ պակաս ադրբեջանցիները: Որ աղաւաղուած տեղանունն որեւէ տրամաբանական բովանդակութիւն ունենալը բոլորովին պարտադիր չէ աղաւաղիչների համար, կարող ենք համոզուել՝ ծանօթանալով ընդամենը հետեւեալ մի քանի օրինակներին:

Նախիջեւանի Ծահապոնք բերդաւանը, որը հազարամեակներ շարունակ Շահապունի տոհմի ամրոցն է եղել<sup>1</sup>, դարձրել են Ծահբուզ (*Sahbuz*) (պարսկերէն՝ շահ («թագաւոր») եւ թուրքերէն բուզ («սառույց») բառերից. բառացիօրէն ստացւում է իմաստազուրկ եւ անհեթեթ մի բան՝ «թագաւորի սառույց»), Խաղխաղ գաւառաւանունը<sup>2</sup> դարձրել են Ղազախ (*Qazax*) («բխեցնելով» դազախ թուրքական ցեղանունից), Տաուշը<sup>3</sup>

դարձրել են Թովուզ (*Tovuz*) («կապելով» քրդերէն թաւուս («սիրամարգ» բառի հետ): Այս նոյն եղանակով, ի դէպ, Արցախի պարսկերէն պատմական անունումներից մեկը՝ Առանի պաղը<sup>4</sup> կամ Առանէ բաղը («այգի Առան», «անտառային Առան») դարձրել են Ղարաբաղ (*Qarabağ*) («սեւ այգի»)<sup>5</sup>:

Բնիկ հայկական տեղանունն խեղաթիւրման ամենաաղաղակող օրինակներից է նաեւ Նախիջեւանի տարածքի վերջին հայաբնակ մեծ բնակավայրի՝ Ազնաբերդի (ստուգաբանւում է հին հայերէնի ազն («տոհմ, սերունդ, զարմ, ազգ») եւ բերդ արմատներով) անունը խորհրդային շրջանում պաշտօնապէս Ազնաբիրդ (*Əznəbyurd*) դարձնելը եւ որպէս *Əziz Nəbinin yurdu*՝ «ազիզ Նաբինի ամառանոց» «ստուգաբանելը»<sup>6</sup>: Սակայն, թէ ով էր եղել այդ «արժանաւոր» Ազիզ Նաբին, այդպէս էլ չիմացան ո՛չ տեղաբնիկ հայերը, ո՛չ էլ եկուոր ադրբեջանցիները: Իսկ հետագայում՝ անկախութիւնից յետոյ, ադրբեջանցի կեղծարարները, իրենք էլ չհաւատալով սեփական յօրինուածքին, կրկին վերափոխեցին գիւղանունը՝ այս անգամ արդէն Չալխանգալայ (*Calxanqala*): Զաւեշտալին, սակայն, այն է, որ սա էլ իրականում ոչ այլ ինչ է, քան գիւղից ոչ հեռու գտնուող նշանաւոր

1 Ս. Օրբէլեան, Պատմութիւն մահաճգին Սիսական, Բ. Ա., Փարիզ, 1859, էջ 52: Ա. Այվազեան, Նախիջևանի վիմագրական ժառանգութիւնը, հտ. 2, Ծախուկ-Ծախապոնք գաւառ, Ե., 2010, էջ 18:

2 Թ. Յակոբեան, Ս. Մելիք-Բախշեան, Հ. Բարսեղեան, Հայաստանի և յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 2, Ե., 1986, էջ 631:

3 Անդ. հտ. 5, Ե., 1986, էջ 48:

4 Ա. Մաթևոսեան, Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ. դար, Ե., 1984, էջ 77:

5 Ա. Սարգսեան, «Ղարաբաղ» տեղանունն առաջացման և ստուգաբանման մոր վարկած, Պատմաբանասիրական հանդէս, 2018, թիւ 3, էջ 254-257:

6 Ա. Վարդանեան, Նախիջևանի որոշ տեղանունների ստուգաբանութեան շուրջ, «Ջախուկեանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի միութեւ, Ե., 2018, էջ 260-261:



Ծափուկ բերդի (Ճահկաբերդի) պարսկերէն *Čalxānqale* (Չալխանղալէ) անուանումը<sup>7</sup>:

Ահա նման ճակատագրի արժանացած հայկական բազմաթիւ այլ աշխարհագրական անունների շարքում է նաեւ Շուշի տեղանունը:

Մեր պատմութեան ու մշակոյթի նշանաւոր կենտրոն Շուշի բերդաքաղաքի անուան ստուգաբանութեան թերեւս ամենաարժանահաւատ տարբերակը տեղանունը Արցախի բարբառի շոշ («ծառի ընձիւղ», «բարձր տեղ», «բարձունք») բառից բխեցնելն է: Այս բառը հայերէնի բարբառներում զրտեւորում է նաեւ շուշ («ուղիղ բարձրացած, ուղղաբերձ»)՝ եւ շիշ («ծառի կատար»)՝ ձեւերով: Քանի որ Արցախի բարբառում միավանկ բառերի ու ձայնաւորը հնչիւնափոխում եւ դառնում է օ (կոթ-կօթ, սոտ-սօտ, տուն-տօն, փուշ-փօշ եւ այլն), հաւանաբար բառի նախնական շուշ տարբերակից է բարբառում առաջացել շոշ ձեւը: Վերջինից է ակնյայտօրէն բխում հէնց Շուշիից ոչ հեռու գտնուող Շոշ գիւղի անունը:

Հազարամեակներ շարունակ որպէս անառիկ ամրոց ծառայած, ապա աւելի ուշ շրջաններում բերդաքաղաք դարձած Շուշի, ինչպէս եւ Շոշ գիւղի աշխարհագրական դիրքն էլ է յուշում, որ այդ անունը բնակավայրերը ստացել են հէնց շրջակայքի վրայ իշխող դիրքի պատճառով:

Շոշ (շուշ, շիշ) բառը թէեւ գրաբարում աւանդուած է, սակայն, ըստ երեւոյթին, պատկանում է հին հայերէնում իւ երկբարբառ ունեցող այն բառերի թուին, որոնք բարբառներին են անցել ի կամ ու պարզ ձայնաւորներով. ինչպէս գրաբարի ալիւր բառի դիմաց բարբառներում առկայ են ալուր եւ ալիւր բարբառային ձեւերը, սիւն

բառի դիմաց՝ սուն եւ սին, հարիւր բառի դիմաց՝ հարուր եւ հարիւր ձեւերը, այնպէս էլ շիշ բառի դիմաց առկայ են շուշ եւ շիշ ձեւերը: Ի դէպ, շոշ, շուշ տարբերակները «ծառի ընձիւղ», «բարձր տեղ» նշանակութիւններով առաւելապէս տարածուած են հէնց Արցախ-Սիւնիքի բարբառի խօսուածքներում, իսկ շիշ տարբերակը՝ Հիւսիսային Նախիջեւանի եւ Վայոց ձորի տեղաբնիկ բարբառի (Ճահուկ Վայքի միջբարբառ) խօսուածքներում՝ «ծառի կատար» նշանակութեամբ<sup>9</sup>:

Փաստօրէն, անցեալում ամրոցի կրած Շուշու, Շուշի բերդ կամ Շոշի բերդ, Շոշի դալայ, Շոշի սղնախ, իսկ գուցէ եւ Քարազիսի բերդ անունները<sup>10</sup> հաւասարազօր են, քանզի բոլորն էլ ունեն «բարձունքի ամրոց» իմաստը, եւ զրանցում ակնյայտօրէն նկատի է առնուած հէնց Շուշիի աշխարհագրական դիրքը:

Վերջին մի քանի դարերում բերդաքաղաք դարձած Շուշին շարունակել է կրել բերդի անունը, սակայն, սեռական հոլովի ձեւն ընդունելով որպէս ուղղական:

Միջնադարեան ձեռագրերում, սակայն, աւանդուած են քաղաքանուան ոչ միայն ի հոլովիչով Շուշի, այլեւ ու հոլովիչով Շուշու եւ ո հոլովիչով Շուշոյ ձեւերը: Օրինակ, 1428 թուականին տէր Մանուէլի գրչագրած Ամարասի Աւետարանում (ՄՄ

7 Անդ:

8 Ս. Մալխասեան, Հայերէն քաղաքական բանարան, հտ. 3, Ե., 1944, էջ 535:

9 Ա. Վարդանեան, Վայոց ձորի միջբարբառը, Ե., 2004, էջ 143:

10 ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Մասն I (1401-1450 թթ.), Ե., 1955, էջ 384. Թ. Յակոբեան, Ս. Մելիք-Բախշեան, Հ. Բարսեղեան, Հայաստանի և յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4, Ե., 1986, էջ 161: Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Եր., 2009, էջ 120, 310-311: Հմմտ. նաեւ Պ. Ա. Չոբանեան, Շոշ եւ Քարազիսի սղնախների նոյնացման հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդէս, 1994, թիւ 1-2, էջ 183-187:

8211) վկայուած է Օուշու ձեւով. «Գրեցաւ աստուածագիծ սուրբ Աւետարանս... յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գեղս Շուշու կոչեցեալ...»<sup>11</sup>, իսկ 1575 թուականին Յովհաննէս քահանայի ընդօրինակած Վարանդայի Աւետարանում (ՄՄ 4375)՝ Օուշոյ ձեւով. «...ի Փոստանհանկ գաւառս Վարընթոյ, ի գեղս, որ կոչի Շուշոյ»<sup>12</sup>:

Սակայն, տեղանունների սեռական հոլովը ե՛լ գրաբարում, ե՛լ միջին հայերէնում, ե՛լ հայերէնի բարբառների մեծ մասում կազմւում է առաւելապէս ա հոլովիչով (Երեւան-Երեւանայ, Վան-Վանայ, Ծահուկ-Ծահուկայ, Գարդման-Գարդմանայ եւ այլն), ուստի, անկասկած, Շուշին ունեցած պէտք է լինի նաեւ Օուշայ սեռականաձեւ տարբերակը, որի վկայութիւնն է այսօր էլ Արցախի բարբառում կիրառական Օուշուայ ձեւը:

Ըստ հոլովիչների տարբերուող՝ սեռականաձեւ այս մի քանի ձեւերից աղբրեջանցիներին, փաստօրէն, «դուր է եկել» Օուշա (Տւշա) տարբերակը, ինչ է թէ՛ այդ ձեւը շատ նման է աղբրեջաներէն Տւշա («ապակի») բառին, թէ՛ եւ վերջինս էլ փոխառութիւն է պարսկերէնից:

Սակայն, հիասթափեցնենք ամեն հայկականը կլանել ցանկացող աղբրեջանական ելուզակներին, որ Տւշա տարբերա-

կը ամենեւին էլ կապ չունի աղբրեջաներէն շուշա («ապակի») բառի հետ, ինչպէս իրենք են կարծում (ըստ աղբրեջանական «ստուգաբանութեան»՝ քաղաքն իր անունը ստացել է իբր «ապակու նման» մաքուր օդ ունենալու պատճառով. ենթադրենք, որ կարելի է կարծել, թէ աշխարհի բոլոր ապակիները մաքուր են, բայց մաքուր բառը որեւէ տրամաբանութեամբ կարելի՞ է համեմատել... ապակու հետ):

Ինչպէս ասում են, ստի ոտքերը այս անգամ էլ են ակնյայտօրէն կարճ, քանզի վերոյիշեալ «վարկածի» հեղինակները «մոռանում են», որ պարսկերէն Տւշա բառից փոխառեալ աղբրեջաներէն Տւշա բառի երկու ձայնաւորներն էլ քմային են, իսկ քաղաքի՝ իրենց նախընտրած Տւշա անունման ձայնաւորներից... ոչ մեկը քմային չէ:

Այլապէս ստացւում է, որ, օրինակ, թուրքերն էլ նոյն անտրամաբանական տրամաբանութեամբ կարող են Վանայ բերդ ձեւը թուրքերէն համարել, իսկ Վանի բերդ տարբերակը՝ հայերէն:

Շուշին ոչ միայն մեր նորօրեայ ազատամարտի խորհրդանիշն է, այլեւ մեր հնամենայ պատմութեան ու մշակոյթի յաւերժող առասպելը, իսկ նրա բոլոր անուանումները՝ հայերէն թէ՛ օտարալեզու, հայկական են:

11 ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Մասն 1 (1401-1450 թթ.), Կազմեց՝ Լ. Խաչիկեան, Ե., 1955, էջ 384:

12 Թ. Միմասեան, Արցախի գրչութեան կենտրոնները, Ե., 2015, էջ 47: